ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/60

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով Ա/Ձ Վրեժ Ղազարյանի կողմից 07.05.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/60 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. Ա/Ձ Վրեժ Ղազարյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Ա/Ձ Վրեժ Ղազարյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) 07.05.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ հաշվապահական ծառայություններ է մատուցում «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) և նշված ծառայությունների շրջանակում իրականացնում է

Ընկերության անունից պետական գնման մրցույթների հայտերի պատրաստումը և մասնակցության հետ կապված բոլոր գործողությունները:

Բողոքաբերը հայտնել է, որ ծառայությունները մատուցելիս՝ նախապատրաստել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի մասնակցության հայտը, որը Ընկերությունը ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), սակայն գնահատող հանձնաժողովը մերժել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել:

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար կապի սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 22.03.2018թ. ժամը 11:00-ի տեղի ունեցած նիստի 4.1 կետի համաձայն՝ 07.04.2018թ. գնահատող հանձնաժողովը շարունակելով աշխատանքները, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 53-րդ և 55-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

09.04.2018թ. Ընկերությունը իր էլեկտրոնային հասցեին armeps էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ստացել է ծանուցում, որի համաձայն «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն ծանուցումն ուղարկելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պետք է ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու

հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ ՀՀ պաշտպանության նախարարության հանձնաժողովի քարտուղար Արման Բաղրամյանի «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային հասցեին:

10.04.2018թ. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեից հանձնաժողովի քարտուղար Արման Բաղրամյանի «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է գնահատող հանձնաժողովի կողմից պահանջած որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Միաժամանակ 10.04.2018թ. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեից գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ուղարկել է նաև հանձնաժողովի քարտուղար Արման Բաղրամյանի անմիջական ղեկավար Արմեն Ամիրյանի «a.amiryan@mil.am» էլեկտրոնային հասցեին:

Սակայն, ինչպես հետագայում պարզվել է, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրությունից՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ վերջինիս կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

Ընթացակարգի գանահատող հանձնաժողովի 17.04.2018թ. թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Էրոդավ» ՍՊԸ, «ԷԼ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ, «Վարբադ» ՍՊԸ, «Տոպազ-95» ՍՊԸ, «Վարմեքս» ՍՊԸ, «Միկրորինգ» ՍՊԸ և «Էյչգրուպ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, իսկ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել, «Յուտեկ» ՍՊԸ, «ՀենրիՌադիո» ՍՊԸ, «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ, «Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ, «Գրիման» ՍՊԸ և «Էլ կոմպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.04.2018թ. որոշել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ մասի պահանջները, մերժել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը նդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը

և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ինչպես արդեն նշվել է, 09.04.2018թ. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեին armeps էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ստացել է ծանուցում, որի համաձայն «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին առաջարկվել է՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթուղթերը՝ ՀՀ պաշտպանության նախարարության «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային հասցեին:

10.04.2018թ. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեից «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է գնահատող հանձնաժողովի կողմից պահանջած որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Վերոհիշյալ փաստը, այն է՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովին ներկայացնելը, կարող է հաստատվել նաև համապատասխան ապացույցներով:

Սակայն, ինչպես հետագայում պարզվել է, անհասկանալի պատճառներով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը չի ստացել Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը, և արդյունքում թիվ 5 արձանագրությամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ վերջինիս կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

Բողոքաբերը նշել է, որ «a.baghramyan@mil.am», «a.amiryan@mil.am» էլեկտրոնային հասցեները հանդիսանում են ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության ՍՊ և ՌՏ գնման բաժնի պաշտոնական էլեկտրոնային հասցեները: Այսօր ՀՀ-ում փաստաթղթաշրջանառության գերակշռող մասն իրականացվում է պաշտոնական էլեկտրոնային հասցեներին ուղարկելու միջոցով: Մասնակցին օրենսդրությունը չի արգելում ըստ ենթակայության ուղարկելու հնարավորությունից և համապատասխան

գրություններն ուղարկել նաև ըստ վերադասության, որն էլ իր հերթին ենթակա է մակագրման: Տվյալ հանգամանքը կարող ենք դիտարկել նաև այլ կոնտեսքստով, մասնավորապես, եթե ժամանակավորպես խաթարվել է էլեկտրոնային համակարգով փաստաթղթերն ուղարկելու հնարավորությունը, ապա պետական կառավարչական հիմնարկներում գոյություն ունի փաստաթղթաշրջանառության կազմակերպման կարգ, համաձայն որի իրականացվում է ըստ ենթակայության՝ աստիճանակարգված: Փաստորեն էլեկտորանային համակարգը, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով, որևէ պահի իր անխափան գործունեությունը մի ակնթարթ տեխնիկապես խափանվել է, սակայն փաստն այն է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն նախատեսված եռօրյա ժամկետի 1-ին իսկ օրը ներկայացրել է որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը վերոհիշյալ պաշտոնական էլեկտրոնային հասցեներին: Էլեկտրոնային համակարգի տեխնիկական խափանման կամ որևէ խոտանի համար ընկերության շահերը պետք է պաշտպանված լինեն և պետք է գործեն հավասար պայմաններում: Խնդիրն այն չէ, թե ընկերությունը պարտավոր լինելով որակավորման փաստաթղթերը ուղարկել քարտուղարի կողմից նշված էլեկտրոնային հասցեին, սակայն «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն ոչ միայն ուղարկել է տվյալ էլեկտրոնային հասցեին, այլ նաև տվյալ գնումների ոլորտը համակարգող բաժնի էլեկտրոնային հասցեներին:

Այսպիսով, Բողոքաբերը գտնում է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն պատշաճ կատարել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ ծանուցումը 09.04.2018թ. ստանալուց հետո սահմանված ժամկետում, 10.04.2018թ. գնահատող հանձնաժողովին ներկայացրել է որակավորման պահանջներին համապատասխանութ-յունը հիմնավորող փաստաթղթերը: Սակայն Ընկերության կամքից անկախ, անհասկանալի տեխնիկական պատճառներով, գնահատող հանձնաժողովը, ըստ երևույթի, չի ստացել Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը և մերժել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը: Վերոհիշյալը հանգեցրել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտմանը, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ ինչպես ապացուցվում է սույն բողոքով, տվյալ դեպքում առկա է

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան էլ. հասցեներին ուղարկելու փաստը: Ուստիև առկա չէ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, մերժելու հիմքը:

Բողոքաբերը նշել է նաև, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժելը հանգեցրել է նաև վերջինիս գնման գործընթացին մասնակցության իրավունքի խախտմանը, ինչը երաշխավորված է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով, ինչը հանգեցրել է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի խախտմանը:

Բողոքաբերը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.04.2018թ. թիվ 5 արձանագրության 1.1 կետով կայացրած որոշումը առ այն, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորորղ փաստաթղթերը, ինչպես նաև պարտավորեցնել դադարեցնել նույն արձանագրությամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ կայացված որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պահանջելու «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ից ներկայացնել որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորորղ փաստաթղթերը:

Ա/Ձ Վրեժ Ղազարյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.05.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն էլեկտրոնային եղանակով ներկայացրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.05.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/60 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/60 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կապի սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6,7,8,10,53,55-րդ չափաբաժինների մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 09.04.2018թ. սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և

ժամկետում «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 25.04.2018թ. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. Բողոքաբերը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի «majev.llc@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը ***10.04.2018թ.*** Ընթացակարգի հրավերում, ինչպես նաև Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով ուղարկված ծանուցման մեջ նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Վրեժ Ղազարյանի 07.05.2018թ. բողոքը, գտնում եմ, որ այն հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կապի սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6,7,8,10,53,55-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 09.04.2018թ. սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել: Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 25.04.2018թ. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Բողոքաբերը ԳԲԽ-ԱՄ-2018/60 բողոքի քննության շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի «majev.llc@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը ***10.04.2018թ.*** Ընթացակարգի հրավերում, ինչպես նաև Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով ուղարկված ծանուցման մեջ նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային փոստի հասցենին ուղարկել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այսպես՝ Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում

(չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի «ՄԱՍ II. Գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգ»-ի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ «***a.baghramyan@mil.am***»:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 7-րդ կետի 7.13-րդ ենթակետի 4-րդ պարբերությամբ սահմանվել է, որ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ ***սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի «majev.llc@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում (10.04.2018թ.) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի ծանուցումը ստանալուց հետո (09.04.2018թ.)՝ հրավերում, ինչպես նաև ծանուցման մեջ նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ուղարկել է պահանջվող փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ա/Ձ Վրեժ Ղազարյանի 07.05.2018թ. ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն, ճանաչվելով առաջին տեղ զբաղեցրած մասնակից և ստանալով հրավերով պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև հրավերով սահմանված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի համապատասխան էլեկտրոնային հասցեին ուղարկել է պահանջվող փաստաթղթերը, դրանով իսկ կատարելով իր պարտականությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Վրեժ Ղազարյանի կողմից 07.05.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.04.2018թ. թիվ 5 արձանագրության 1.1 կետով կայացրած որոշումը առ այն, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև պարտավորեցնել դադարեցնել նույն արձանագրությամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պահանջելու «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ից ներկայացնել հրավերով նախատեսված առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ